

ԱՌԱՃՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ինչպես հայտնի է, առածները և ասացվածքները համարվում են ժողովրդական բանահյուսության կարևորագույն տարրերը, որոնք խոսքին մեծ պատկերավորություն են հաղորդում՝ այն դարձնելով իմաստալից և զեղեցիկ: Առածների սահմանումը համարվում է բավականին բարդ խնդիր, որին անդրադարձել են բազմաթիվ առաջաբաններ: Գոյություն ունեն առածի վերաբերյալ բազմաթիվ սահմանումներ, որի կապակցությամբ իր հոդվածներից մեկում պրոֆ. Վ. Միեդերը նշել է, որ առածների սահմանման փորձերն իսկ առածներից շատ են (Mieder 1989, p. 13): 1985 թ.-ին Վ. Միեդերը տվել է առածի հիսուն հինգ հանրաճանաչ սահմանում: Նշենք դրանցից մի քանիսը՝

ա. Առածը իմաստություն արտահայտող կարճ նախադասություն է (quoted by Mieder 1989, p. 15):

բ. Առածը մի համընդհանուր դրույթ կամ դատողություն է, որը մեկնաբանում, դասակարգում կամ գնահատում է իրավիճակը (Harald Burger, quoted by W. Mieder 1977, p. 2):

գ. Առածը հանրաճանաչ, կայուն նախադասություն է, որն իմաստություն է ուսուցանում հակիրճ, բայց վառ և պատկերավոր ձևով (Rohrick-Mieder, 1977, p. 2):

Նշենք, որ տալով առածի սահմանումները՝ Վ. Միեդերը կարևորել է նրա երկու հիմնական բաղադրիչները՝ ավանդականությունը և տարածվածությունը, որոնք առածի սահմանման մի կարևոր մասն են կազմում (Mieder 1996, p. 597):

Հիմնվելով իր իսկ կողմից մշակված առածի սահմանումների վրա և ուսումնասիրելով նաև այլ աշխատություններ՝ Վ. Միեդերը տվել է առածի մի ընդհանրական սահմանում՝ համաձայն որի առածները կարճ, հանրության կողմից ընդունված նախադասություններ են, որոնք պարունակում են իմաստություն, ճշմարտություն, բարոյախոսություն, փոխաբերություն, անփոփոխ և ճշմարիտ ավանդական տեսակետներ, որոնք բանավոր ձևով փոխանցվում են սերնդից սերունդ (Mieder, 1996, p. 597):

Հարկ ենք համարում նաև ներկայացնել հանրաճանաչ առաջաբան Ա. Թեյլորի տեսակետը առածի սահմանման վերաբերյալ: Հատկանշական է այն փաստը, որ Թեյլորը "The Proverb" (Archer Taylor, 1985, pp. 66-134) գրքում նշել է, որ առածի սահմանման փորձն իսկ արդեն առածային է դարձել, քանի

որ հազիվ թե կարելի է գտնել առածի սահմանման վերաբերյալ որևէ հողված, որը չակնարկի Թեյլորի այն դրույթը, որ առածի կատարյալ սահմանումն անհնար է, և ինչպես նշում է Թեյլորը. «գոյություն ունի մի անասելի ուժ, «որակ», որը մեզ հուշում է, թե արդյո՞ք տվյալ նախադասությունը առածային է թե ոչ: Բացի այդ, Թեյլորն ընդգծում է, որ առածի սահմանումը չափազանց բարդ է այն համձն առնելու համար: Ակնհայտ է, որ այդ խորհրդավոր, «անասելի» ուժը առածի կամ ասացվածքի ավանդականությունը, տարածվածությունը և գործածելիությունն է, և նրանք օգնում են մեզ որոշել, թե արդյոք տվյալ նախադասությունը առածային է թե ոչ (Taylor Archer, 1931, p. 3): Բերենք մեկ օրինակ վերը նշվածն ապացուցելու համար՝ եթե "all that glitters is not gold" առածում "gold"-ը փոխարինենք "diamond"՝ բառով, ապա այն այլևս առած չի համարվի անկախ այն փաստից, որ այսպես կոչված բոլոր նշիչները այն առած կհամարեին: Թերևս "all that glitters is not diamond" նախադասությունը ոչ առածային համարելու պատճառն այն է, որ այս ձևով այն երբեք չի կիրառվում: Այս առնչությամբ կարելի է նշել նաև Մատտի Կուուսիի այն հայտնի դրույթը, որ առածները «մարդկային վավերագրեր են», այսինքն նրանք ստեղծվել են հանրության կողմից և օգտագործվում, վավերացվում և համարվում են առածներ ի շնորհիվ իրենց տարածվածության և կիրառելիության: (Kuusi Matti, 1957, p. 52): Համամիտ լինելով Ա. Թեյլորի տեսակետին առածի սահմանման վերաբերյալ՝ Մ. Կուուսին նշում է, որ առածները սահմանվում են անսահմանելի տերմիններով՝ ելնելով առածի սահմանման անհնարի-նությունից:

Մեկ այլ առածաբան Մալկոլմ Ջոնսը, նույնպես համամիտ լինելով Թեյլորի հետ, ակնհայտորեն առաջ է քաշում այն նույն գաղափարը, որը վերաբերում է առածի սահմանման անհնարինությանը, համաձայն որի առածն այն արտահայտությունն է, որը մենք առածային ենք համարում (M. Jones, 1989, p. 205):

Բ. Ուայթինգն առաջարկել է առածի իր ուրույն սահմանումը՝ հաշվի առնելով առածին բնորոշ այնպիսի գծեր, ինչպես օրինակ նրա բանաստեղծական ձևը, արտահայտչական առումը: Ըստ Ուայթինգի՝ առածը մի կարճ, իմաստալից ասվածք է, որն օժտված է համընդհանուր կիրառմամբ, այն մի համառոտ նախադասություն է, որը հաճախ իր ձևով փոխաբերական է և աղիտերացման ենթարկված և արտահայտում է բոլորին հայտնի՝ փորձով հաստատված ճշմարտություն (B. Whiting, 1932, p. 302):

Դիտարկենք Ա. Դանդեսի կողմից առաջարկված առածի սահմանումը, ըստ որի առածն ավանդական, «ապացուցված» դրույթ է, որը բաղկացած է առնվազն մեկ նկարագրական տարրից, որն էլ իր հերթին բաղկացած է

թեմայից (նյութից) և մեկնաբանությունից: Այն առածները, որոնք բաղկացած են մեկ նկարագրական տարրից, ոչ հակադրական են, իսկ այն առածները, որոնք ունեն երկու և ավել նկարագրական տարր, կարող են լինել և՛ հակադրական, և՛ ոչ հակադրական: Ա. Դանդեսը բերում է երկու նկարագրական տարրից բաղկացած ոչ հակադրական առածի օրինակ՝ (ինչպիսին հայրն է, այնպիսին էլ որդին է), և երկու տարրից բաղկացած հակադրական առածի օրինակ՝ (տղամարդն աշխատում է այգաբացից այգաբաց, իսկ կնոջ աշխատանքն ընդհանրապես չի վերջանում): Ա. Դանդեսը այն կարծիքին է, որ առածներում հակադրություն արտահայտող միջոց կարող է ծառայել ավանդապես միմյանց հակասող զույգերի կիրառումը՝ մեկ-երկու, շատ-քիչ, հին-նոր, մաս-ամբողջ, կյանք-մահ, թույլ-ուժեղ, սև-սպիտակ և այլն:

Հակադիր կառուցվածք ունեցող առածների ավելի ցայտուն օրինակ է այն առածը, որի և՛ թեման, և՛ մեկնաբանությունը իմաստային զույգերի հակադիր անդամներն են համարվում: Օրինակ՝ *Man proposes, God disposes*. Մարդը ծրագրում է, Աստված՝ տնօրինում:

Այս առածում ունենք մարդ-Աստված, ծրագրել-տնօրինել հակադիր անդամները: Այս ամենով հանդերձ՝ Ա. Դանդեսը առածի հակադրական կառուցվածքի կարևորության մասին իր հայացքների հաստատումն է գտնում այս ժանրի երկու կարևոր սահմանումների մեջ, որոնցից մեկը պատկանում է Սերվանտեսին՝ համաձայն որի «առածը կարճ ասույթ է, որը բխում է երկար փորձից», իսկ մյուսը պատկանում է Բերտրան Ռասելին, ըստ որի «առածները ներկայացնում են շատերի իմաստությունը և մեկի հնարամտությունը» (Dundes Alan, 1975, p. 970):

Հետաքրքիր է նաև Կու Գաբրիելայի սահմանումը, համաձայն որի առածը մի անփոփոխ լեզվական էություն է, որը հաստատում միտք է արտահայտում: Լեզվական մակարդակում այն գեղարվեստական պատկեր է, մտքերի մակարդակում՝ դատողություն: Որպես բանախյուսական ստեղծագործություն՝ այն պատկանում է երկրորդական նշանային համակարգին: Այն երկակի կողով օժտված հաղորդակցական համակարգ է, հիմնականում լեզվական տեղեկատվության կրողը, միևնույն ժամանակ այդ տեղեկատվությունը այլ բովանդակություն էլ է պարունակում՝ դառնալով բանաստեղծական արտահայտության գործիք (Voo Gabriella, 1989, p. 19):

Նույն տեսակետը կարելի է գտնել նաև Գ. Լ. Պերմյակովի մոտ, որը նշում է, որ մի կողմից առածները և ասացվածքները լեզվական երևույթներ են, որոնք նման են դարձվածքներին, մյուս կողմից տրամաբանական միավորներ են՝ դատողություններ, իսկ մեկ այլ կողմից՝ գեղարվեստական պատկերներ, որոնք ճշմարիտ և պատկերավոր ձևով արտահայտում են կենդանի և իրական

փաստեր: Գ. Պերմյակովը նաև նշում է, որ առածային դարձվածքները ոչ այլ ինչ են, քան իրավիճակի նշաններ, որոնք իրավիճակից դուրս են բերում մեկնաբանություններ, գնահատումներ, նախագուշակումներ և հրամաններ (Grigori Permiakov, 1970):

Նշենք, որ բացի Պերմյակովից և Վու Գաբրիելայից առածների և ասացվածքների դերը աշխարհի լեզվական պատկերի ստեղծման խնդրում կարևորել են նաև մի շարք այլ լեզվաբաններ: Այսպես, օրինակ, Պոտեբնյան, դեռևս տասնիններորդ դարի վերջում անդրադառնալով առածների և ասացվածքների յուրօրինակ գեղարվեստական պատկերին՝ նշել է, որ այն մեզ հնարավորություն է ընձեռում բազմազան մտքերի մեծ քանակը փոխարինել համեմատաբար փոքր մտավոր մեծություններով: Անառարկելի է, որ աշխարհի տարբեր լեզվական պատկերների կողքին գոյություն ունի նաև աշխարհի առածային պատկերը: Վերջինս, իր ուրույն տեղը զբաղեցնելով աշխարհի լեզվական պատկերում, ընկալվում է որպես արտացոլվող իրականության երկրորդային իմաստավորման յուրահատուկ միջոց՝ արտահայտված առածներով և ասացվածքներով: Այն կարելի է դիտել նաև որպես աշխարհագրադրության և աշխարհընկալման մի ձև, կամ ինչպես Գ. Գալևն է նշում, այն ազգային գեղարվեստական «տրամաբանություն» է, մտածողության «կերտվածք», այն, թե ինչպես է տվյալ ժողովուրդն ընկալում աշխարհը և կառուցում աշխարհի լեզվական պատկերը:

Վկայակոչելով բազմաթիվ այլազգի հեղինակների կողմից առաջարկվող առածի սահմանումները՝ անհրաժեշտ ենք համարում նաև նշել հայ բանահյուս առածաբանների տեսակետները այս հարցի շուրջ:

Ա. Ղանալանյանը իր «Առածանիում» նշում է, որ առածները և ասացվածքները պատկերավոր ու սեղմ ասություներ են հասարակական կյանքի, մարդկային բարքի և ժողովրդական ամենաբազմազան երևույթների վերաբերյալ (Ղանալանյան, 1960, էջ 10): Պատկանելով ժողովրդական բանահյուսության վիպական ժանրին՝ նրանք օժտված են ճանաչողական և խմացական արժեքով: Առածները հարուստ նյութ են տալիս աշխատավոր ժողովրդի իսկական պատմությունը իմանալու համար՝ լայնորեն արտացոլելով ու ընդհանրացնելով նրա ողջ սոցիալ-պատմական կենսափորձը, տեմպերներն ու ակնկալիքները: Քիչ խոսքով շատ բան ասելու բացառիկ ուժը, պարզությունը, կոնկրետությունը, պատկերավորությունը նրանց բնորոշ առանձնահատկություններն են: Ինչպես նշում է Ա. Ղանալանյանը, բովանդակությամբ, ձևի և ծավալի տեսակետից մոտ և մեծ լինելով միմյանց՝ ժողովրդական առածներն ու ասացվածքները բնութիվ տարբեր են իրարից: Մինչդեռ առածը

այլաբանական ստեղծագործություն է, որի բուն միտքն արտահայտված է անուղղակի կերպով, ասացվածքը իրականությունը դրսևորում է ուղղակի ձևով:

Ժողովրդական առածների մեծ է, օրինակ, հետևյալ այլաբանական ստեղծագործությունները, «հավը կածի, ուրուրը կտանի», որտեղ ակնարկված է հասարակական կյանքում տեղի ունեցող անարդարությունը և շահագործումը:

Ասացվածքների մեծ է, օրինակ, հետևյալ ուղղակի իմաստ ունեցող ստեղծագործությունը. «ախը վեր է քան թե մախը», ուր շեշտված է վախի զգացման մեծ ուժը և նրա ծանր ազդեցությունը մարդու վրա:

Կարևոր է նշել նաև Ա. Նազարյանի առածների և ասացվածքների սահմանումը և տարբերակումը, համաձայն որի առածները և ասացվածքները շարահյուսորեն կազմակերպված են որպես պարզ և բարդ նախադասություններ, որոնք որոշ բարոյախոսություն են արտահայտում, մի խորհուրդ են տալիս, ուսուցանում են, վարվելակերպի մի կանոն հանձնարարում: Առածը գերանգացապես փոխաբերական-այլաբանական արտահայտություն է, մինչդեռ ասացվածքը ուղղակի անվանողական բնույթ ունի, չնայած գերծ չէ ընդհանրացնող իմաստից և ընդլայնված մեկնաբանելու հատկությունից (Նազարյան Ա. Զ., 1999):

Ձուգադրենք Ա. Նազարյանի կողմից բերվող հետևյալ նախադասությունները՝

He that will eat the kemel must crack the nut.(առած)

Habit is a second nature.(ասացվածք)

Համեմատելով վերը նշված նախադասությունները՝ գալիս ենք այն համոզմունքին, որ նրանցից մեկը հանդես է գալիս որպես առած, քանի որ այն փոխաբերական-այլաբանական արտահայտություն է, իսկ մյուսը ասացվածք է, քանի որ ուղղակի անվանողական բնույթ ունի և գերծ չէ ընդհանրացնող իմաստից:

Այսպիսով, տարբեր առածաբանների կողմից առաջարկվող առածների սահմանումներից, ըստ էության, բխում է հետևյալ սահմանումը՝ առածը կարճ, սեղմ դրույթ է, որն օժտված է ակնհայտ կամ ենթադրելի ընդհանուր իմաստով, որը վերաբերում է մարդկային վարքի, վերաբերմունքի կամ գործողությունների մի բնորոշ դաշտին: Ավելին, առածները և ասացվածքները օժտված են մեծ տարածվածությամբ և կիրառելիությամբ, այսինքն նրանք հանրահայտ են և հաճախ մեջբերվում են որևէ ժամանակաշրջանում մի որևէ լեզվական համայնքում, իսկ խոսակցական լեզվում նրանք հեղինակ կամ գրականության աղբյուր չունեն: Եվ քանի որ մարդկության հիմնական կենսափորձը նույնն է և դեռևս անհիշելի ժամանակներից նույնն է եղել, առածների զգալի մասը

նույնիսկ տարբեր ազգերի մշակույթներում արտահայտում է նույն հիմնական միտքը:

Գրականություն

1. Archer Taylor, *The proverb*. Cambridge (Massachusetts), Harvard University Press, 1931. p. 3.
2. Archer Taylor, *The Proverb and an Index to "The Proverb"*, Barn-Frankfurt am Main-New York, 1985, pp. 66-134.
3. Dundes, Alan 1975. "On the Structure of the Proverb" *In Proverbium*, no. 25:961-973.
4. Grigori Permiakov, *Ot pogovorki do skazki*. Mosva: Nauka, 1970.
5. Jones, Malcolm: The depiction of proverbs in late Medieval art. In: Gréciano, G. (ed.) *Europhras 88. Phraseologie Contrastive*. (Collection Recherches Germaniques No. 2.) Actes du Colloque International Klingenthal - Strasbourg 12-16. Mai 1988. Strasbourg, Université des Sciences Humaines Strasbourg. 1989. p. 205.
6. Kuusi, Matti: *Parömiologische Betrachtungen*. Folklore Fellows Communications 69, No. 172, 1957. p. 52.
7. Mieder, Wolfgang: *American proverbs. A study of texts and contexts*. (Sprichwörterforschung, Band 13.) Bern, Peter Lang, 1989.
8. Mieder, Wolfgang: Proverbs. In: Jan Arnold Brunvand (ed.): *American folklore. An encyclopedia*. New York, Garland Publishing. 1996. p. 597-601.
9. Nazaryan A. H., *Illustrated dictionary of English proverbs and sayings*, Erevan 1999.
10. Vöð Gabriella: *Igaz ember igazat szól. Közmondások a romániai magyar folklórból*. (A true man tells the truth. Proverbs from the folklore of Hungarians in Romania.) Bucuresti, Kriterion 1989. p. 19.
11. Whiting, Bartlett Jere: The nature of the proverb. In: *Harvard Studies and Notes in Philology and Literature* 14, 1932. p. 278, 301-302.
12. Гачев Г. Д., *Национальные образы мира*. Н., 1988, с. 44.
13. Ա. Տ. Ղանալանյան, «Առաժանի», Երևան 1960: